

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Միջազգային հարաբերությունների համակարգը ներկայումս բնութագրվում է դինամիկ վերափոխումներով: Սառը պատերազմն, ինչպես հայտնի է, ավարտվեց երկրեն աշխարհակարգի փլուզմամբ, իսկ հետագա զարգացումներում նկատելի է երկու միտում՝ բազմաբևեռ և միաբևեռ աշխարհակարգեր հաստատելու ձգտումները: Այս փուլում որևէ պետության ռազմավարական շահերի իրացման և արտաքին հարաբերություններում ու համաշխարհային քաղաքականության մեջ ծանրակշիռ դերակատարման վճռորոշ գործոն է հանդիսանում մրցակցությունը:

Վերջին տասնամյակում ընդլայնվել են անվտանգության համաշխարհային ոլորտի հիմնախնդիրների շուրջ քննարկումներն ու գիտական բանավեճերն, ինչն, ի թիվս այլ հանգամանքների, անմիջականորեն պայմանավորված է մարդկային զարգացման գործընթացների ակնհայտ բարդացմամբ, միջուկային և զանգվածային ոչնչացման զենքերի տարածմամբ, միջազգային ահաբեկչության ուժգնացմամբ, առողջապահական և բնապահպանական սպառնալիքների ի հայտ գալով<sup>1</sup>: Այդ առումով, պետության ազգային անվտանգության ապահովման արդի պահանջները ներառում են բոլոր երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների զարգացում՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, գլոբալ և տարածաշրջանային կայունության համար բարենպաստ պայմանների ապահովում, մասնակցություն համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական ու քաղաքական կառույցներին, միջազգային համագործակցություն համաշխարհային նշանակության մի շարք հիմնախնդիրների շուրջ (զանգվածային ոչնչացման զենքի, սովորական սպառնալիքությունների տարածման ոլորտում փոխադարձ պարտավորությունների կատարում, ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման նկատմամբ միջազգային վերահսկողության ապահովում, հանցավորության, թմրաբիզնեսի և ահաբեկչության դեմ պայքար, զինված հակամարտությունների կանխարգելում և կարգավորում, բնապահպանական սպառնալիքների չեզոքացում, այդ թվում՝ միջուկային և ճառագայթային անվտանգության ապահովում): Նկատենք, որ տարածնա շահեր ունեցող երկրների միջև ներկայումս ընթանում է երկխոսության և համագործակցության գործընթաց նշված հիմնախնդիրների շուրջ:

Յուրաքանչյուր քաղաքականություն, որի գլխավոր սուբյեկտը պետությունն է, իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան պետական իրատեսական շահի կենսագործման գործիքակազմ: Ժողովրդավարական կառավարման և քաղաքացիական հասարակության պայմաններում ժողովուրդը, որպես կանոն, համարվում է ինքնիշխանության կրող և իշխանության միակ աղբյուր: Այդ դեպքում պետությունն ընկալվում է իբրև հասարակության, ժողովրդի շահերն արտահայտող, հետևաբար այդ շահերը կոչվում են ազգային:

Քաղաքագիտական գրականության մեջ տարածված է անհատի, հասարակության և պետության կտրվածքներով ազգային շահի նույնականության աստիճանի մասին բանավեճը: Բազմաթիվ մասնագետներ գտնում են, որ նշված երեք սուբյեկտների շահերը կարող են չհամընկնել: Ազատական քաղաքակրթական համակարգում ազգային կամ պետական շահն, ընդհանուր առմամբ, ածանցվում է անհատի շահից և իրենից ներկայացնում է քաղաքացիների հաշվեկշռված շահերի (սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ) ամբողջություն:

Ազգային շահերն, ըստ էության, հանդիսանում են կենսագործունեության բոլոր ոլորտներում անհատի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ամբողջություն, որը կրում է երկարաժամկետ բնույթ: Դրանցից ելնելով, սահմանվում են պետության արտաքին և ներքին քաղաքականության հիմնական նպատակները, ռազմավարական, մարտավարական և ընթացիկ խնդիրները: Ազգային շահերի պաշտպանությունն ենթադրում է տնտեսության կայուն զարգացում, ժողովրդավարական քաղաքական համակարգի առկայություն, քաղաքացիական հասարակության կայացում<sup>2</sup>:

Ազգային շահն առարկայական հասկացություն է, քանի որ այն հիմնվում է այս կամ այն պետության շոշափելի իրողությունների վրա: Միաժամանակ այն ենթակայական հասկացություն է, քանի որ կարող է տարբեր կերպ ընկալվել և կենսագործվում է երկրների ղեկավարների կողմից՝ կախված նրանց պատկերացումներից և ունակություններից: Բացի այդ, ազգային շահի ընկալումը, որպես կանոն, ծայրահեղորեն ենթարկված է գաղափարախոսություններին, միշտ հենվում է որոշակի հասարակական կարծրատիպերի վրա: Այն կարող է լինել անիրատեսական, այսինքն՝ կարող է հաշվի չառնել աշխարհաքաղաքական իրողությունները, միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտների ազգային շահերը:

Ըստ էության, ազգային շահերը որպես կողմնորոշիչներ են ծառայում պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում: Դրանց իրատեսական ընկալումը ձևավորվում է՝ հաշվի առնելով պատմական փորձը, տվյալ պետության ներուժը, ռեսուրսները, ռազմական հնարավորու-

<sup>1</sup> Ս. Սաֆարյան, «Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները», Երևան, 2003:

<sup>2</sup> «Ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Առավոտ» օրաթերթ, 04.02.2006:



թյունները և առկա աշխարհաքաղաքական իրավիճակը: Ազգային շահերն ապահովվում են պետության տրամադրության ներքո գտնվող բոլոր միջոցներով և ռեսուրսներով (քաղաքական, գաղափարական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական): Դրանք, որպես կանոն, ընկած են լինում իշխանական վերնախավի գործունեության հիմքում, իսկ պետական իշխանության վերին օղակների փոփոխությունը հաճախ հանգեցնում է աշխարհաքաղաքական գերակայությունների փոփոխության:

Տվյալ հասարակության կամ պետության ազգային շահերն, ի թիվս այլ գործոնների, բնականաբար պայմանավորվում են աշխարհագրական դիրքով, աշխարհաքաղաքական և ներքին քաղաքական իրավիճակներով, տարածքային առանձնահատկություններով, մարդկային և բնական պաշարներով, տնտեսական ներուժով, ժողովրդագրական իրավիճակի փոփոխության միտումներով, հասարակության սոցիալական կառուցվածքով:

Ազգային շահերի պաշտպանությունը՝ դրանց սպառնացող գործոնների բացահայտման և հակազդման միջոցով, ինչպես արդեն նշվեց, ենթադրում է ազգային անվտանգության համակարգի ստեղծում: Այդ համակարգի հիմնական տարրերն են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները, պետական և հասարակական կազմակերպություններն ու միավորումները, առանձին քաղաքացիները, ազգային անվտանգության վերաբերյալ օրենսդրությունը: Այս համակարգն, անշուշտ, պետք է ունենա հստակ կանխատեսման ենթահամակարգ, կանխարգելիչ միջոցառումները ճիշտ ժամանակին ձեռնարկելու ունակություն՝ առաջացող սպառնալիքները կանխարգելելու նպատակով: Բացի այդ, այն պետք է փոխկապակցված և փոխապայմանավորված լինի անվտանգության համաշխարհային և տարածաշրջանային համակարգերի, այլ պետությունների անվտանգության համակարգերի հետ:

Անվտանգության տիրույթն ընդգրկում է բոլոր այն ոլորտները, որտեղ առկա են կամ կարող են ի հայտ գալ անհատի, հասարակության և պետության շահերը, հետևաբար՝ նաև դրանց սպառնացող գործոնները:

Անվտանգության ապահովումը ենթադրում է սպառնալիքների դեմ ակտիվ պայքար՝ դրանց վերհանման, կանխարգելման, թուլացման, հակադարձման և վերացման միջոցով<sup>1</sup>: Սպառնալիքն, ընդհանուր առմամբ, իրադարձությունների զարգացման այնպիսի հնարավորությունն է, որի դեպքում ի հայտ է գալիս կենսականորեն կարևոր ազգային շահերին վնաս հասցնելու անմիջական վտանգ:

Ազգային անվտանգության սպառնալիքները դասակարգվում են ըստ տարբեր հայտանիշների.

- ըստ հավանականության աստիճանի՝ երևակայական, իրական, հեռանկարային,
- ըստ ծագման՝ բնական, տեխնածին,
- ըստ ուղղվածության՝ ներքին, արտաքին,
- ըստ մասշտաբների՝ համաշխարհային, տարածաշրջանային, տեղական,
- ըստ ազդեցության աստիճանի՝ մարտահրավեր, ռիսկ, վտանգ,
- ըստ հետևանքների բնույթի՝ բարոյական, նյութական,
- ըստ հասարակական կյանքի և մարդկային գործունեության ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, բնապահպանական, մշակութային, տեղեկատվական, այլ:

Մարտահրավերն այնպիսի հանգամանքների, պայմանների և գործոնների համախումբ է, որոնք թեև կարող են սպառնացող բնույթ չկրել, բայց անպայմանորեն պահանջում են համապատասխան արձագանք: Ռիսկը զարգացման գործընթացներում անբարենպաստ, անցանկալի, և որպես կանոն, կորուստներով հղի իրավիճակների առաջացման հնարավորությունն է: Վտանգն արտացոլում է անհատի, հասարակության, պետության, սոցիալական խմբերի շահերին, հոգևոր և նյութական արժեքներին էական վնաս հասցնելու լիովին գիտակցվող, բայց ոչ ճակատագրական հավանականությունը:

Անվտանգության ժամանակակից սպառնալիքների փոխապայմանավորվածությունը հաճախ դժվարությամբ է ստեղծում դրանք ըստ վերը բերված դասակարգման տարանջատելու գործում (ներքին ու արտաքին, տնտեսական ու քաղաքական և այլն):

Ազգային անվտանգության սպառնալիքների շարքում, նախ և առաջ, հարկ է նշել զինված հակամարտությունները, պետության նկատմամբ հարձակման և տարատեսակ այլ ռոմնգությունների հնարավորությունը, պետության շրջափակումը (տնտեսական, տրանսպորտային, ջրային, ցամաքային, օդային), միջազգային ահաբեկչությունը, կազմակերպված հանցագործությունը, ազգամիջյան բռնամանքը, ազգային և կրոնական ծայրահեղականությունը, միջուկային սպառնալիքը և զանգվածային ոչնչացման զենքի տարածումը, թմրամյութերի, զենքի, ռազմամթերքի ապօրինի տարածումը, պետության ներքին գործերին արտաքին միջամտությունը, հասարակական հարաբերությունների քրեականացումը, օրենքի գերակայության երաշխավորման սկզբունքի անտեսումը, պետական կառավարման (պետական իշխանության կազմակերպման) համակարգի և քաղաքացիական հասարակության անկատարությունը, անօրինական ներգաղթը, ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական իրավիճակների, ինչպես նաև միջազգային հարաբերությունների անբարենպաստ զարգացումները, հոգևոր և բարոյական անկումը, հովանավորչությունը, կաշառախտը<sup>2</sup>:

Մասնավորապես, անվտանգության արտաքին սպառնալիքների շրջանակն ընդգրկում է այլ պետությունների կողմից հարձակողական վարքի դրսևորումը ոչ միայն ռազմական, այլ նաև ֆինանսական, տնտեսական, առևտրային, տեղեկատվական դաշտերում: Նման սպառնալիքների սուբյեկտներ են համարվում միջազգային, անդրազգային և ներքին հանցավոր կառույցները, դրանց հետ քրեական բնույթի համագործակցության շրջանակներում գործունեություն իրականացնող պաշտոնյաները, ապօրինի տնտե-

<sup>1</sup> Մ. Շահգեղյան, «Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները», Երևան, 2003:

<sup>2</sup> «Ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Առավոտ» օրաթերթ, 04.02.2006:



սական կառույցները, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունները, պետության ներքին գործերի նկատմամբ անհարկի միջամտություն ցուցաբերող միջազգային կազմակերպությունները և այլն:

Անվտանգության արդյունավետ համակարգի բացակայության պայմաններում երկիրը կարող է հայտնվել բարդ իրավիճակներում, դրանցից բխող անկանխատեսելի և դժվար հաղթահարելի հետևանքներով: Այդպիսի հետևանքների բացառման նպատակով անհրաժեշտ է ունենալ անվտանգության ապահովման այնպիսի համակարգ, որն անընդհատ փոփոխվող աշխարհում թույլ կտա արագորեն կողմնորոշվել բարդ իրավիճակներում և համարժեքորեն արձագանքել ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներին: Այն հայտ է, որ այդպիսի համակարգի հիմքում պետք է ընկած լինի անվտանգության ռազմավարության՝ գիտականորեն հիմնավորված համալիր ծրագիր:

Հարկ է նշել, որ «անվտանգություն», «զարգացում» և «կայունություն» հասկացությունները սերտորեն փոխկապակցված են: Զարգացումը նպաստում է կայունությանը, որն իրենից ներկայացնում է համակարգի ունակությունը՝ պահպանելու (արագ վերականգնելու) իր գործառնություններն ու հատկությունները՝ քայքայիչ գործոնների ազդեցության ներքո: Անվտանգության և կայունության միջև ևս գոյություն ունի ուղղակի կապ. որքան կայուն է համակարգը, այնքան բարձր է նրա անվտանգության մակարդակը, հետևաբար կայունությունը համակարգի անվտանգության մակարդակը բնորոշող ցուցանիշներից մեկն է: Այն, ընդհանրապես, բնորոշ է տնտեսական, սոցիալական, քաղաքական, ռազմական և այլ հարաբերություններին, ինչպես նաև հասարակությանը:

Ազգային անվտանգության օբյեկտներ կարելի է համարել անհատին, նրա բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները, հասարակությունը և նրա բարօրությունը, համամարդկային, ազգային, ժողովրդավարական, բարոյական, հոգևոր և նյութական արժեքները, բնությունը և շրջակա միջավայրը, անկախ պետակալությունը, քաղաքացիական հասարակությունը, օրինականությունը և սահմանադրական կարգը, սեփականությունը, պետությունը, նրա ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը: Ազգային անվտանգության սուբյեկտներ են հանդիսանում պետությունը, իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերը, համապետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև քաղաքացիները և նրանց միավորումները (կուսակցություններ, հասարակական և այլ կազմակերպություններ): Նշված սուբյեկտներն էլ, մասնակցելով անվտանգության ապահովմանը, կազմում են ազգային անվտանգության համակարգը:

Ընդհանուր առմամբ, ազգային անվտանգության համակարգում հիմնահարցերը դիտարկվում են անհատի, հասարակության և պետության մակարդակներով: Քաղաքացու, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանությունն իրենից ներկայացնում է ազգային անվտանգության առարկան: Նշված երեք սուբյեկտների անվտանգության ապահովմանը միտված գործառնությունների իրականացման նպատակով սովորաբար պետական իշխանության գործադիր թևում ձևավորվում են ազգային անվտանգության ապահովման մարմիններ:

Պետությունը պարտավոր է երաշխավորել ինչպես իր տարածքում, այնպես էլ դրանից դուրս գտնվող սեփական քաղաքացիների անվտանգությունն ու պաշտպանությունը: Օտարերկրյա պետություններում գտնվող սեփական քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով պետությունը կիրառում է քաղաքական, դիվանագիտական, տնտեսական և տարաբնույթ այլ լծակներ:

Ազգային անվտանգության խնդիրների, նպատակների և գործառնությունների համալիրը որոշակիորեն առնչվում է միջազգային անվտանգությանը: Պետության անվտանգության վիճակը կախված է նրանից, թե ինչպիսի դեր է նա հավակնում. շարքային պետություն, տարածաշրջանային տերություն կամ գերտերություն: Շարքային պետությունը չի տիրապետում սեփական ինքնիշխանության պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր միջոցներին, ուստի և սովորաբար ձգտում է ընդգրկվել համապատասխան միջպետական դաշինքներում՝ անվտանգությունը համատեղ պաշտպանելու նպատակով: Տարածաշրջանային տերությունն իր կշռով գերազանցում է սովորական շարքային պետությանը, բայց զիջում է գերտերությանը: Գերտերությունն ի գործ է միայնակ ապահովել իր ազգային շահերը:

Ազգային անվտանգության վիճակը պայմանավորող հիմնական գործոնների թվում կարելի է նշել պետության աշխարհագրական դիրքը և աշխարհաքաղաքական իրավիճակը, քաղաքական համակարգը, կառավարման ձևը և կառուցվածքը, տարածքը, մարդկային, բնական և նյութական ռեսուրսները, տնտեսական, մտավոր, գիտակրթական ներուժը, ժողովրդագրական իրավիճակը, հասարակության սոցիալական կառուցվածքը, ինչպես նաև պետության մասնակցությունը միջազգային և տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերում:

Ազգային անվտանգության ապահովումը նպատակառոտված, գիտակցաբար կարգավորվող գործընթաց է, որը պահանջում է անվտանգության բոլոր սուբյեկտների ջանքերի ու գործողությունների կոորդինացում: Այն ենթադրում է պետական միասնական քաղաքականության իրականացում՝ սպառնալիքների բնույթին համարժեք քաղաքական, օրենսդրական, կազմակերպչական, տնտեսական և այլ լծակների միջոցով:

Ազգային անվտանգության ապահովման համապարփակ սկզբունքներից են ազգային շահերի գերակայությունը, օրինականությունը, քաղաքացու, հասարակության և պետության շահերի հաշվեկշռվածությունը, քաղաքացու, հասարակության և պետության փոխադարձ պատասխանատվությունն ազգային անվտանգության ապահովման գործում, ազգային անվտանգության ապահովման միջոցառումների փոխադարձ տրամաբանական կապը, անվտանգության համակարգի գործունեության վերահսկողությունը,

<sup>1</sup> «Ազգային անվտանգության հիմնադրությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Առավոտ» օրաթերթ, 04.02.2006:

«Անվտանգության մասին» ՀՀ օրենք:



օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և անվտանգության միջազգային համակարգերի հետ փոխշահավետ համագործակցությունը<sup>1</sup>:

Ազգային անվտանգության արդյունավետ համակարգն, ընդհանուր առմամբ, պետք է իրականացնի հետևյալ գործառնությունները.

- քաղաքացու, հասարակության և պետության կենսական շահերի որոշում, դրանց ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսում, բացահայտում և գնահատում,
- սպառնալիքների կանխարգելմանն ու չեզոքացմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումների իրականացում,
- ազգային անվտանգության ապահովման ուժերի ու միջոցների ձևավորում և կառավարում:

Ազգային անվտանգության ոլորտի կարգավորման իրավական արդյունքներ են հանդիսանում միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը, միջազգային պայմանագրերն ու պարտավորությունները, ինչպես նաև պետության սահմանադրությունը և օրենսդրության այլ բաղադրիչները:

## **ՎԱՐՂԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

*Աժ պատգամավոր, քննատիկ խմբի*

*ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

## **ՍԵՐՈՇԵՑ ՄԱՐՈՒԹՅԱՆ**

*ՀՊՏՀ ասպիրանտ*

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԻ ՓՈԽԱՐԺԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ դրամի խիստ արժեվորումը լայն քննարկումների առարկա է դարձել: 2003 թվականի երկրորդ կիսամյակից մինչև 2006 թվականի վերջը դրամը արժեվորվել է 38.3%-ով, տարեկան միջինը՝ 11%-ով:

1993 թվականի նոյեմբերի 22-ից հետո՝ ՀՀ դրամի ներդրման առաջին ամիսներին արտարժույթային պաշարների գրեթե լրիվ բացակայության պատճառով, Հայաստանի արժույթային մարմիններն, ըստ էության, ի գործու չէին իրապես ազդելու տարերայնորեն ձևավորվող փոխարժեքի վրա: Վիճակը շտկելու համար առաջնային խնդիր դարձավ երկրի արտարժույթային պաշարների ստեղծումը: Այդ նպատակով 1993 թվականին ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի որոշմամբ ՀՀ տարածքում գործող ձեռնարկությունները (անկախ սեփականության ձևից) արտարժույթով ստացված հասույթների 50%-ը պարտավոր էին վաճառել Ֆինանսների նախարարությանը ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետև՝ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով<sup>2</sup>, իսկ 1994 թվականի վերջում այն սահմանվեց մինչև 30%<sup>3</sup>: Արդյունքում, հանրապետությունում նկատելիորեն մեծացավ արտարժույթային միջոցների ծավալը: Այս հանգամանքն, իր հերթին, թույլ տվեց ՀՀ ԿԲ-ին հաշվարկային փոխարժեքը հաստատելիս կողմնորոշվել բորսայական գնանշումներով: Այս ռեժիմը գերծ չէր նաև որոշ բացասական հետևանքներից: Նախ՝ արտարժույթի պարտադիր վաճառքի ռեժիմի հետևանքով երկիր մտած արտարժույթի մի մասի կենտրոնացումը ՀՀ Ֆինանսների նախարարության ձեռքում հանգեցրեց ներմուծման գործարքներում պետական մարմինների չափից դուրս ներգրավվածությանը, որը հակասում էր շուկայական բարեփոխման հիմնական սկզբունքներին: Երկրորդ՝ նշված ժամանակահատվածում ՀՀ պաշտոնական պահուստների դինամիկան ցույց տվեց, որ պարտադիր վաճառքի ռեժիմի միջոցով պետական արտարժույթային պաշարների կուտակումն, ըստ էության, արդյունավետ չէր: Բացի այդ ռեժիմի կիրառության և այդ ժամանակահատվածում փոխարժեքի բազմակիության հետևանքով խիստ տուժում էին տնտեսվարող սուբյեկտները: Ընդհանուր առմամբ, այս ռեժիմը Հայաստանի պայմաններում չկարողացավ կանգնեցնել դրամի արժեզրկումը, ճիշտ հակառակը՝ հենց այդ ռեժիմի գործողության ժամանակաշրջանում էր, որ դրամը ենթարկվեց առավել ուժեղ և արագ արժեզրկման: ՀՀ դրամի արժեզրկման հիմնական պատճառներից էր այն, որ ՀՀ դրամը ներդրվեց բարձր տղաճի, պետական բյուջեի խոշոր դեֆիցիտի և այդ դեֆիցիտը հիմնականում ՀՀ ԿԲ վարկերի հաշվին ֆինանսավորվելու պայմաններում: ՀՀ ԿԲ-ն, չունենալով արտաքին պահուստների համապատասխան մակարդակ, չէր կարողանում անհրաժեշտ չափով միջամտել արժույթային շուկայում ձևավորվող գործընթացներին և կանխել ՀՀ դրամի շեշտակի արժեզրկումը: Արդյունքում, ՀՀ դրամի ներդրումից մեկ տարի անց ԱՄՆ դոլարն արժեք 404 ՀՀ դրամ, այսինքն ՀՀ դրամն արժեզրկվել էր 2686%:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրամական գնազվածը Հայաստանում այն ժամանակ աճել է բազմապատիկ ավելի դանդաղ, քան արժույթի փոխարժեքը, այլ խոսքերով՝ հայրենական փողի գնազվածի աճն այն ժամանակ արժույթային շուկայի հավասարակշռության խախտման գլխավոր պատճառ չէր կարող հանդիսանալ, և հիմնական պատճառներից էր փոխարկելի արտարժույթի նկատմամբ

<sup>1</sup> «Ազգային անվտանգության հիմնադրությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Առավոտ» օրաթերթ, 04.02.2006:

<sup>2</sup> «Անվտանգության մասին» ՀՀ օրենք:

<sup>3</sup> 1993թ. հուլիսի 30-ի ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի թիվ 402 որոշում:

<sup>4</sup> 1994թ. դեկտեմբերի 31-ի ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի թիվ 612 որոշմամբ: